ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
REPUBLIC OF ARMENIA
SECRETARY GENERAL OF MINISTRY OF ENVIRONMENT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ МИНИСТЕРСТВА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

№ 5/07.6/8484

«_____» «_____» 2026թ.

Քաղաքացի Անտոն Վլասովին

Հարգելի պարոն Վլասով

Ի պատասխան Ձեր 2026 թվականի սեպտեմբերի 8-ի N 2227582 հարցման՝ տրամադրում եմ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025–2030 թվականների ծրագրի իրականացման վերաբերյալ տեղեկությունը:

Առդիր՝ 11 թերթ:

9/18/2026

X

ԱՐԿԱԴԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN ARKADI 2901780121

Հարգանքով՝
պարտականությունները կատարող Արկադի Խաչատրյան

Հասարակայնության հետ կապերի բաժին
Հակոբ Խաչիյան, 011 818 555/ 5171

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
3 Government Bld., Republic Sq., Yerevan, Armenia, 0010
0010, Армения, г.Ереван, Пл. Республики, Дом Правительства 3
minenv@env.am | www.env.am
+374 11 818 555

Մթնոլորտային քաղաքականության վարչություն
Իրինա Ավագյան, 011 818 555/ 5351

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 2025-2030ԹԹ. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակվել և Կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի N611-Լ որոշմամբ հաստատվել է Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030 թվականների համալիր միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) (https://www.arlis.am/hy/acts/207222/latest):

Համաձայն Ծրագրի՝ **նախատեսվում է**

1) ՀՀ ամբողջ տարածքում ԱՀԿ (առողջապահության համաշխարհային կազմակերպության) կողմից առաջարկվող հիմնական աղտոտիչների չափման հնարավորություն և տեղեկատվության իրական ժամանակում հասանելիության ապահովում **14 անշարժ** (Երևան քաղաքում 6 դիտակայան) **դիտակայանների** միջոցով**,**

2) արտակարգ իրավիճակներում օդի աղտոտվածության չափման հնարավորություն, ինչպես նաև մշտական դիտակայան չունեցող բնակավայրերում օդի աղտոտվածության ժամանակավոր գնահատում **2 շարժական դիտակայանների** միջոցով,

3) օրգանական աղտոտիչների (բենզոլ, բենզապիրեն և այլ ցնդող օրգանական միացություններ) և փոշու մեջ ծանր մետաղների (կադմիում, կապար, նիկել, արսեն և այլն) ներառում դիտարկումների համակարգում՝ **քիմիական լաբորատորիայի արդիականացում,**

4) օդի որակի մոնիթորինգի սարքավորումների (անշարժ և շարժական դիտակայաններ) ստուգում՝ **ռեֆերենս լաբորատորիայի առկայություն,**

5) մթնոլորտային օդի աղտոտվածության բաշխվածության, անշարժ աղբյուրներից արտանետումների տվյալների հետ համադրման մոդելավորում, **կանխատեսման գործիքակազմի ստեղծում,**

Ծրագրով նախատեսվում է նաև

6) Երևան քաղաքում և մարզերում մթնոլորտային օդի որակի բարձրացնելու նպատակով շինարարության և հանքարդյունաբերության բնագավառում **փոշենստեցման՝ այդ թվում փոշեճնշիչ սարքավորումների կիրառման պահանջի** սահմանում,

7) վերանայել և խստացնել **շինարարության բնագավառում մթնոլորտային օդի պահպանության պահանջների նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցները**,

8) **Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից իրականացնել համապատասխան ուսումնասիրություններ և դրանց հիման վրա մշակել համակարգային լուծում**՝ տեխնիկական զննության շրջանակներում շարժիչի արտանետումների չափման գործընթացի ամբողջական թվայնացման, տեխնիկական զննության կայանների վերազինման, արտանետումների ստուգման գործընթացի նկատմամբ վերահսկողության էլեկտրոնային համակարգի ներդրման եղանակով,

9) **Երևան քաղաքում ավելացնել կանաչ տարածքները**՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ցուցված մեկ շնչին բաժին ընկնող կանաչ տարածքների ցուցանիշներն ապահովելու համար,

10) Իրականացնել **իրազեկման, բացատրական աշխատանքներ** օրենսդրությամբ սահմանված մթնոլորտային օդի պահպանության պահանջների, մթնոլորտային օդն աղտոտող վնասակար մարդածին երևույթների և դրանց հետևանքների վերաբերյալ:

Ծրագրով սահմանված միջացառումների իրականացման շրջանակներում հայտնում եմ.

Մթնոլորտային օդի մոնիթորինգի համակարգի արդիականացման և այն միջազգային չափանիշներին համապատասխանեցման նպատակով Շրջակա միջավայրի նախարարությանը 2025 թվականին հատկացվել է 300մլն դրամ, որի շրջանակում ձեռք են բերվել մթնոլորտային օդի որակի ժամանակակից երկու անշարժ ավտոմատ դիտակայաններ:

Դիտակայանները տեղադրվել են Կենտրոն համայնքի Երվանդ Քոչար 6/1 հասցեում և Քանաքեռ-Զեյթուն համայնքի Դավիթ Անհաղթի զբոսայգում: Դիտակայանները 2026 թվականի հունվարից գործում են, սակայն գտնվում են փորձարկման փուլում, որի ավարտից հետո նախատեսվում է դրանց շահագործման պաշտոնական մեկնարկը:

2025 թվականի սեպտեմբերի 29-ին Շրջակա միջավայրի նախարարությունը և Ճապոնիայի կառավարությունը ստորագրել են «Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև հայտագրերի փոխանակման ձևով «Տնտեսական և սոցիալական զարգացում» դրամաշնորհի տրամադրման համաձայնագիր, որի շրջանակում նախատեսվում է ձեռք բերել ժամանակակից ավտոմատ սարքավորումներ (ճապոնական Horiba ընկերության արտադրության) մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի երեք դիտակայանի համար՝ հիմնական աղտոտիչների (ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, գետնամերձ օզոնի, կախված մասնիկների (PM10 և PM2.5)) չափման նպատակով (պայմանագրով ժամկետ է սահմանված 2026 թվականը): Դրամաշնորհային պայմանագրի շրջանակում տրամադրվում են միայն սարքավորումները, իսկ երեք դիտակայանի տաղավարները և անհրաժեշտ այլ միջոցները ներառված ձեռք է բերվում «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի ֆինանսական միջոցների հաշվին:

Կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև 2024 թվականի տարեկան գործողությունների ծրագրերի շրջանակներում բանակցվող «Reform and CEPA Implementation Facility» համալրվող ֆինանսական համաձայնագրի շրջանակում նախատեսվում է ունենալ մթնոլորտային օդի որակի գնահատման երկու դիտակայան (ծրագրով ժամկետ է սահմանված 2027 թվականը):

Եվրամիության պատվիրակությանը ներկայացված «Մաքուր օդ առողջության և կանաչ աճի համար Հայաստանում» (Clean Air for Health and Green Growth in Armenia) ծրագրային հայտի շրջանակում նախատեսվում է ունենալ մթնոլորտային օդի որակի գնահատման ևս երկու դիտակայան (ծրագրային հայտով ժամկետ է սահմանված 2028 թվականը):

Շինարարության բնագավառում **փոշենստեցման՝ այդ թվում փոշեճնշիչ սարքավորումների կիրառման պահանջի** սահմանման շրջանակներում Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «Շինարարական արտադրության կազմակերպում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն ու Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N07-Ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N02-Ն հրամանով շինարարական նորմերում ամրագրվել է փոշենստեցման, այդ թվում՝ փոշեճնշիչ սարքավորումների, կիրառման պահանջը: Այդ դրույթն ուժի մեջ է մտել 2026 թվականի մայիսի 24-ից:

Հանքարդյունաբերության բնագավառում **փոշենստեցման՝ այդ թվում փոշեճնշիչ սարքավորումների կիրառման պահանջի** սահմանման շրջանակներում տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 15-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 43-Ն հրամանով (այսուհետ՝ հրաման) օգտակար հանածոյի արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջներում

ներառվել է փոշենստեցման, այդ թվում՝ փոշեճնշիչ սարքավորումների կիրառման պարտադիր պահանջ: Համաձայն հրամանի՝ պահանջն ուժի մեջ է մտել 2026 թվականի հունվարի 16-ից, իսկ մինչև հրամանի ուժի մեջ մտնելն ընդերքօգտագործման իրավունք ստացած ընդերքօգտագործողները պարտավոր են ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում ապահովել փոշենստեցման աշխատանքների իրականացումը՝ փոշեճնշիչ կամ մշուշացնող սարքավորումների կիրառմամբ:

Միջոցառումների ծրագրի 4.1-ին կետի կատարումն ապահովելու նպատակով մշակվել և Կառավարության քննարկմանն է ներկայացվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը (https://www.e-draft.am/projects/10362), համաձայն որի՝ վերանայվել են շինարարության ընթացքում մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված պահանջները, ներդրվել են ռիսկահեն վարչական պատասխանատվության մեխանիզմներ յուրաքանչյուր իրավախախտման դեպքի համար, որոնց շրջանակում վարչական տուգանքի չափը կախված կլինի ոչ միայն իրավախախտման փաստից, այլև շինարարության ծավալից, մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգության աստիճանից և ազդեցության ենթակա բնակչության խոցելիությունից: Միևնույն ժամանակ սահմանվել են փոշու արտանետման հետ կապված այլ աշխատանքներ (ընդերքօգտագործում, բետոնային հանգույցներ և այլն) իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար փոշու արտանետումների կանխարգելող պարտականությունների շրջանակներ, որոնց չպահպանման դեպքում սահմանվել է վարչական պատասխանատվություն:

Միջոցառումների ծրագրի 5.2-րդ կետով սահմանված «Ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների չափման համակարգի և վերահսկողության գործընթացի կատարելագործում» միջոցառման շրջանակներում տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը իրականացնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության համակարգի բարեփոխումներ, որի շրջանակներում տեխնիկական զննության նոր մոդելի նեդրման նպաատակով իրականացվել են տեխնիկական զննության գործընթացի ուսումնասիրություններ:

Բացի այդ՝ տեխնիկական զննության նոր մոդելի ներդրման հարցը քննարկվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից:

Աշխատանքներ են տարվում նաև վերանայելու տեխնիկական զննության կազմակերպման գործող իրավակարգավորումները՝ դրանք համապատասխանեցնելով ԵՄ օրենսդրության չափանիշներին:

Ծրագրի 5.1-ին կետով սահմանված միջոցառման շրջանակներում 2026 թվականի մարտի 1-ից մինչև օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում կանաչ տարածքների ավելացման համատեքստում «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից շուրջ 2.5 հա առանձին հողատարածքներում իրականացվել են բարեկարգման, ոռոգման համակարգի անցկացման և կանաչապատման աշխատանքեր: Բացի այդ՝ Նուբարաշենի խճուղու հարևանությամբ 8.5 հա տարածքում անտառաշերտի ստեղծման աշխատանքներն ընթացքի մեջ են, աշնանը նախատեսվում է իրականացնել ծառատունկ, իսկ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից աշնանը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի հյուսիսային մուտքի մոտ 3 հա տարածքում կանաչապատման աշխատանքներ:

Միջոցառումների ծրագրի 3.1-ին կետի շրջանակներում իրականացվել են իրազեկման աշխատանքներ, մասնավորապես՝

- ***Շրջակա միջավայրի նախարարության կողմից***

Իրազեկման աշխատանքներն ուղղված են խոզանների, չորացած բուսածածկույթի, արտադրական և այլ վտանգավոր թափոնների այրման արդյունքում առաջացող բնապահպանական և առողջապահական ռիսկերի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանը: Քաղաքացիներին ներկայացվել են նշված երևույթների հետևանքով մթնոլորտային օդի աղտոտման, հողի բերրիության նվազման, կենսաբազմազանության խաթարման, ինչպես նաև դաշտային և անտառային հրդեհների առաջացման վտանգները, միաժամանակ ընդգծվել են օրենսդրությամբ սահմանված արգելքներն ու պատասխանատվության միջոցները:

Իրազեկման աշխատանքները կրում են շարունակական բնույթ և միտված են համայնքներում շրջակա միջավայրի պահպանության մշակույթի ձևավորմանը, ինչպես նաև մթնոլորտային օդի որակի բարելավմանը: Մասնավորապես՝ իրականացվել են իրազեկման և հանրային հաղորդակցության շրջանակում հետևյալ միջոցառումները.

- Շրջակա միջավայրի նախարարության նախագահությամբ «ԵՄ-ն՝ հանուն կանաչ վերականգնման» ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի վերանայման վերաբերյալ աշխատաժողով: Աշխատաժողովը կարևոր հարթակ էր ներգրավված մարմինների միջև դիրքորոշումների փոխանակման և հետագա համագործակցության ուղղությունների նախանշման համար՝ օրենքի վերանայման գործընթացը առավել ամբողջական և համադրելի դարձնելու նպատակով, հանդիպման ժամանակ շահագրգիռ գերատեսչություններին ներկայացվել է նաև մթնոլորտային օդի որակի վատթարացման վրա ազդող գործոնները, օրենքով արգելված գործառույթների ազդեցությունները մթնոլորտային օդի որակի և շրջակա միջավայրի վրա (https://goo.su/DKnNfU)
- Շրջակա միջավայրի նախարարության մթնոլորտային քաղաքականության վարչության կողմից «Արմենպրես»-ի թղթակցի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ՝ ներկայացվել, հանրությանն իրազեկվել է մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները, օրենսդրությամբ արգելվող գործողությունները, մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված տնտեսվարող սուբյեկտներին ներկայացվող պայմաններն ու պահանջները, շինարարության ժամանակ շինհրապարակից փոշու արտանետումը կանխարգելելու նպատակով ներկայացվող պայմաններն ու պահանջները: Իրազեկվել են նաև մթնոլորտային օդի պահպանության օրենսդրորեն սահմանված պահանջների և պայմանների չկատարման դեպքում կիրառվող վարչական պատասխանատվության վերաբերյալ (https://goo.su/NG4I44):
- Ամբողջական հարցազրույցը՝ https://armenpress.am/hy/article/1237349:

Տերևներն այրելու վտանգները. ինչու է պետք խուսափել այս սովորությունից

- 2025 թվականի սեպտեմբերի 24-ին պաշտոնապես հրապարակվել է, որ Հայաստանի Հանրապետությունում օդի որակի մոնիթորինգը իրականացվում է Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի» ՊՈԱԿ-ի կողմից: Կարևոր է նշել, որ որոշ առցանց հարթակներ տարածում են տվյալներ, որոնք հիմնված չեն պաշտոնական մոնիթորինգային տվյալների վրա: Նման տեղեկատվությունը չպետք է դիտվի որպես հավաստի կամ օգտագործվի համեմատական գնահատումների համար: Շրջակա միջավայրի նախարարությունը կոչ է արել հանրությանը և գործընկերներին

o

գ - «Մի այրեք խոզանները» խորագրով իրազեկում» դրա բացասական հետևանքները,

գ ուղատնտեսական աշխատանքներին ընդառաջ կամ հետո խոզանների ու բուսական

վ

ե

լ

բ

մնացորդների այրումն ուղղակիորեն նպաստում է շրջակա միջավայրի կարևորագույն բաղադրիչների ոչնչացմանը (https://goo.su/sTB28nk):

●

թվականի հուլիսի 31-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում տեղի ունեցավ աղտոտվածության վերաբերյալ միջոցառում, որը կազմակերպվել էր ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի և Global Shapers Yerevan Hub-ի նախաձեռնությամբ: Պանելային քննարկման բանախոսներն էին Շրջակա միջավայրի նախարարության և ներկայացուցիչները: Նրանք հանդես եկան կարևոր ելույթներով՝ ներկայացնելով ինչպես քաղաքականության, այնպես էլ մոնիթորինգի ոլորտում իրականացվող ընթացիկ բարեփոխումները:Հանրությանը մանրամասն ներկայացվել է օրենսդրական պահանջները, արգելվող գործունեությունները, թույլատրելի աշխատանքները, բարեխիղճ ոլորտավարների դերը և մեղավորների հանրային հսկողության ռեգիստրավարության գործընթացը: Միջոցառմանը մասնակցում էին շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումների և բնապահպանական հ

● 2025 թվականի մայիսի 6-ին շրջակա միջավայրի նախարարությունում կայացել է էկոկրթական հանդիպում Հրազդան քաղաքի «Պարույր Սևակի անվան N8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի աշակերտների հետ՝ «Օդ, ջուր, կյանք պահպանենք միասին» նախաձեռնության շրջանակներում (https://goo.su/zCnrSUH):

● 2025 թվականի ապրիլի 1-ին շրջակա միջավայրի նախարարությունը հյուրընկալել է Երևանի Եղիշե Չարենցի անվան N67 միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի աշակերտներին, որոնք «Օդի աղտոտվածություն» թեմայով նախագծային աշխատանքի շրջանակում հանդիպել են նախարարության համապատասխան ստորաբաժանումների մասնագետների հետ (https://goo.su/vy6lr):

● 2025 թվականի մարտի 31-ին նախարարության պաշտոնական էջում հրապարակվել է հանրությանը, որ այրելով խոզանները դուք պարզապես նպաստում եք շրջակա միջավայրի կարևորագույն բաղադրիչների ոչնչացմանը, և մասնավորապես՝ հողի որակական հատկությունների կորստին (https://goo.su/YPkc3TD):

● 2025 թվականի մարտի 1-ին շրջակա միջավայրի նախարարությունը հյուրընկալել է Աբովյան քաղաքի Վ. Համբարձումյանի անվան թիվ 10 հիմնական դպրոցի աշակերտներին թեմայով նախագծային աշխատանքի շրջանակում՝ համապատասխան վարչությունների ներկայացուցիչների հետ: (https://goo.su/5TUHawl):

Շրջակա միջավայրի նախարարության մթնոլորտային քաղաքականության վարչության մասնակցությամբ 2025 թվականի փետրվարի 26-ին Օրհուս կենտրոնում կայացել է հանդիպում հասարակական կազմակերպությունների, բնապահպանների հետ: Հանդիպման ընթացքում հարց պատասխան ձևաչափով պատասխանվել է հասարակական կազմակերպությունների կողմից բարձրացված հարցերին, իրազեկվել է, որ համաձայն նախարարությունն իրականացնում մթնոլորտային օդի պահպանության քաղաքականությունը և մթնոլորտային օդի որակի մոնիթորինգը: Ներկայացվել է, որ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում օրենսդրական պայմանների և պահանջների նկատմամբ վերահսկողություն իրականացնում է բնապահպանության և

ընդերքի տեսչական մարմինը: Իրազեկվել է շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակված օրենսդրական գործող կարգավորումների վերաբերյալ, յուրաքանչյուր օրենսդրական պայմանների կամ պահանջների չկատարման համար սահմանված վարչական պատասխանատվության սահմանաչափերի վերաբերյալ: Հասարակական կազմակերպությունների և բնապահպանների հետ քննարկվել է նաև շրջակա միջավայրի նախարարության կողմից նախատեսվելիք և մշակման փուլում գտնվող օրենսդրական միջոցառումները, գույքագրվել են կազմակերպությունների կողմից բարձրացված բնապահպանական խնդիրները՝ մշակվելիք օրենսդրական փոփոխություններում ներառելու համար (https://goo.su/parDc8S):

- Պաշտոնապես մեկնարկել է «Մաքուր օդ՝ հանուն առողջության և կանաչ աճի Հայաստանում» համատեղ ծրագիրը, որի ընթացքում շրջակա միջավայրի նախարարության կողմից ներկայացվել է մթնոլորտային օդի որակի ներկա վիճակը, ոլորտում իրականացված աշխատանքները, առկա խնդիրներն ու դրանց լուծման ուղղությամբ նախատեսվող միջոցառումները:

Ծրագրի նպատակն է ամրապնդել Հայաստանի կարողություններն օդի որակի մշտադիտարկման, վերլուծության և կարգավորման ուղղությամբ՝ նպաստելով օդի որակի բարելավմանը, մարդկանց առողջության առավել արդյունավետ պաշտպանությանը և կայուն կանաչ աճի ապահովմանը (https://goo.su/vHcw66):

- 2026 թվականի մայիսի 11-ին Երևանի թիվ 186 հիմնական դպրոցի աշակերտներն այցելել էին Շրջակա միջավայրի նախարարություն:

Նախարարության մասնագետներն աշակերտներին ներկայացրել են շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող արդիական հիմնահարցերը, մթնոլորտային օդի աղտոտման [illegible] (https://goo.su/njUHUfZ): [illegible] «[illegible] այրեք խոզանները» խորագրով տեղեկատվական նյութ՝ խոզանների այրման բացասական ազդեցությունների և դրա հետևանքով առաջացող բնապահպանական ռիսկերի վերաբերյալ (https://goo.su/La9HbzT):

- [illegible] թվականի ապրիլի 23-ին Երևանի Հ Գալստյանի անվան թիվ 83 ավագ դպրոցի աշակերտներն այցելել էին Շրջակա միջավայրի նախարարություն՝ «Թափոնների [illegible] [illegible]ազդեցությունը մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև թափոնների տեսակները, դրանց կառավարման մարտահրավերները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել մեծածավալ աղբի և կենցաղային թափոնների կուտակման խնդրին, վերամշակման և վերօգտագործման հնարավորություններին:

Նախարարության ներկայացուցիչները ներկայացրել են նաև ոլորտում իրականացվող քաղաքականությունները, ընթացիկ ծրագրերը և միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող նախաձեռնությունները (https://goo.su/d0C0lb):

- ***<u>Առողջապահության նախարարության կողմից</u>***

Պարբերաբար պաշտոնական հարթակներով ներկայացնում է մթնոլորտային օդի աղտոտման հնարավոր բացասական ռիսկերը՝ բնակչության առողջության վրա, վերջիններիս կանխարգելմանն ուղղված վարքականոնները, ինչպես նաև ներգրավվում է տարբեր շահագրգիռ գերատեսչությունների մասնակցությամբ իրականացվող մամուլի ասուլիսներին (https://www.moh.am/#1/8265, https://www.youtube.com/watch?v=KDF17I0Wp68, https://armenpress.am/hy/article/1236014, https://goo.su/NUDHB, https://goo.su/E2z5Lq6):

- ***<u>ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կողմից</u>***

ՀՀ բոլոր մարզերում, տարբեր համայնքներում, քաղաքացիների շրջանակներում իրականացվել են իրազեկման բացատրական աշխատանքներ, մասնավորապես՝

1. 2025 թվականի փետրվարի 14-ին Արարատի մարզ այցի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում մարզպետի, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և տեղի բնակիչների հետ:

Քննարկվել են կենցաղային աղբի, խոզանների, աղբավայրերի, եղեգների, չորացած տերևների, գյուղատնտեսական հանդակներում բուսածածկույթի այրման հետևանքով մթնոլորտային օդի աղտոտման հարցեր:

Ներկայացվել են այրումների հետևանքով առաջացած մթնոլորտային օդի, մարդու առողջության, կենսաբազմազանության և հողի օրգանական կազմի վրա ունեցող բացասական ազդեցությունները:

Հանդիպումը լուսաբանվել է, հղում՝

- https://www.ecoinspect.am/post/more/690

2. 2025 թվականի փետրվարի 27-ին Երևան քաղաքում կազմակերպվել է հանդիպում լայնածավալ շինարարական աշխատանքներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների հետ:

Քննարկվել են շինհրապարակների կահավորման և փոշու արտանետումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտությունը, ներկայացվել են բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Հանդիպումը լուսաբանվել է, հղում՝

- https://www.ecoinspect.am/post/more/696

3. 2025 թվականի մարտի 18-ին Արմավիրի մարզ այցի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում մարզպետի և մարզի տարբեր համայնքների ակտիվ քաղաքացիների հետ:

Քննարկվել են մարզում առկա բնապահպանական խնդիրների՝ խոզանների, բուսական մնացորդների, աղբի այրումների կանխարգելման և մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ հարցեր: Ներկայացվել են առաջարկություններ բնակչության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

Հանդիպումը լուսաբանվել է Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» ծրագրով, հղումներ՝

- https://www.youtube.com/watch?v=m1qVPyAeQ3U
- https://www.facebook.com/share/v/1G1gVamnrs/
- https://www.ecoinspect.am/post/more/705
- https://goo.su/wnZnqX

4. 2025 թվականի ապրիլի 25-ին Արարատի մարզի Արտաշատ, Վեդի, Վերին Դվին, ապրիլի 9-ին, մայիսի 2-ին Արմավիրի մարզի Արաքս, Վաղարշապատ համայնքներում ՆԳՆ Արմավիրի և Արարատի մարզային ոստիկանության, փրկարար ծառայության աշխատակիցների հետ համատեղ մթնոլորտային օդի պահպանության թեմայով իրազեկում-հանդիպումներ են կազմակերպվել համայնքապետերի, ոլորտային պատասխանատուների, բնակավայրերի ղեկավարների և տեղի բնակիչների հետ:

Հանդիպումները լուսաբանվել են, հղում՝

- https://goo.su/WwPD8q
- https://www.ecoinspect.am/post/more/731

5. 2025 թվականի մարտի 21-ին Լոռու, Շիրակի, մարտի 26-ին Վայոց ձորի, 27-ին և 31-ին Արագածոտնի մարզերում տնտեսավարող սուբյեկտների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ու տեղի բնակիչների հետ կազմակերպված հանդիպումների ընթացքում ներկայացվել են մթնոլորտային օդի պահպանության կանոնները և օդի աղտոտման վնասակար հետևանքները:

Հանդիպումները լուսաբանվել են, հղում՝

- https://www.ecoinspect.am/post/more/731

6. 2025 թվականի հուլիսի 10-ին Երևան քաղաքում կազմակերպվել է հանդիպում բնապահպանական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, բնապահպանների և ակտիվ քաղաքացիների հետ:

Հանդիպման նպատակն էր ներկայացնել ՀՀ տարածքում արձանագրված բնապահպանական խախտումների ընդհանուր պատկերը, վերհանել ոլորտում առկա համակարգային խնդիրները, ինչպես նաև քննարկել այն կանխարգելիչ միջոցառումները, որոնք կնպաստեն շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրավախախտումների նվազեցմանը:

Հանդիպումը լուսաբանվել է Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» ծրագրով, հղումներ՝

- https://www.ecoinspect.am/post/more/746
- https://goo.su/JNE2c33
- https://www.youtube.com/watch?v=53Bs6OwMUDI&t=3s

7. 2025 թվականի հունիսի 17-20-ը Վայոց ձորի մարզի Արենի, Եղեգնաձոր, Վայք, Տավուշի մարզի Դիլիջան, Նոյեմբերյան, Լոռու մարզի Ալավերդի, Ստեփանավան համայնքների պատասխանատուների ու տեղի բնակչության հետ կազմակերպվել են իրազեկում-հանդիպումներ կենցաղային աղբի, խոզանների, աղբավայրերի, եղեգների, չորացած տերևների, գյուղատնտեսական հանդակներում բուսածածկույթի այրման, ապօրինի ծառահատումների, աղբավայրերի շահագործման, սեզոնային հրդեհների չեզոքացման թեմաներով:

Հանդիպումները լուսաբանվել են, հղումներ՝

- https://www.ecoinspect.am/post/more/738
- https://www.ecoinspect.am/post/more/739
- https://goo.su/R7A8c
- https://goo.su/bwmtd

8. 2025 թվականի հուլիսի 1-4-ը Արարատի մարզի Արտաշատ, Վեդի, Արարատ, Արմավիրի մարզի Արաքս, Մեծամոր, Արմավիր, Գեղարքունիքի մարզի Սևան, Կոտայքի մարզի Աբովյան, Չարենցավան, Հրազդան և Ծաղկաձոր համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները, ավագանու անդամները, բնակիչներն իրազեկվել են մթնոլորտային օդի պահպանության կանոնների և օդի աղտոտման վնասակար հետևանքների մասին:

Հանդիպումները լուսաբանվել են, հղումներ՝

- https://www.facebook.com/reel/1394971115139584
- https://www.facebook.com/reel/4972807186278202

9. 2025 թվականի հոկտեմբերի 2-ին Արմավիրի մարզի Արմավիր, հոկտեմբերի 8-9-ը Կոտայքի մարզի Աբովյան, Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքների բնակիչների, տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների հետ անցկացվել են իրազեկման միջոցառումներ՝ շրջակա միջավայրին հասցվող վնասների նվազեցման, օրենսդրական պահանջների իրազեկման մակարդակի բարձրացման ու ամրապնդման նպատակով:

Հանդիպումները լուսաբանվել են, հղումներ՝

- https://www.ecoinspect.am/post/more/827
- https://www.ecoinspect.am/post/more/879

10. 2025 թվականի հոկտեմբերի 31-ին Երևան քաղաքում կազմակերպվել է հանդիպում լայնածավալ շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչների, ակտիվ քաղաքացիների հետ:

Քննարկվել են շինհրապարակներում փոշենստեցման, այդ թվում՝ փոշեճնշիչ սարքավորումների կիրառման, շինհրապարակների կահավորման և փոշու արտանետումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ հարցեր, իրականացվել են իրազեկման աշխատանքներ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջների պարտադիր կատարման ուղղությամբ:

Հանդիպումը լուսաբանվել է Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» ծրագրով, հղումներ՝

- https://www.youtube.com/watch?v=5DbR1WxEykg&t=47s
- https://www.ecoinspect.am/post/more/1017

11. 2025 թվականի նոյեմբերի 21-ին Սյունիքի մարզի Կապան, դեկտեմբերի 4-5-ին Տավուշի մարզի Իջևան, Դիլիջան համայնքներում կազմակերպվել են իրազեկում-հանդիպումներ ոլորտային գործունեություն իրականացնող խոշոր տնտեսավարողների, անտառտնտեսության մասնաճյուղերի, համայնքային կոմունալ տնտեսությունների ներկայացուցիչների, ակտիվ քաղաքացիների հետ: Քննարկվել են մարզերում առկա բնապահպանական խնդիրները, աղբի, տերևների այրման հետևանքով մթնոլորտային օդի աղտոտման, հրդեհների կանխարգելման վերաբերյալ հարցեր, ինչպես նաև իրավախախտումների նվազեցմանն ուղղված միջոցառումները:

Հանդիպումները լուսաբանվել են, հղում՝

- https://www.ecoinspect.am/post/more/1066

12. Օդի աղտոտման նվազեցմանն ուղղված միջոցառումների շրջանակում պատրաստվել է խոզանների, բուսական մնացորդների այրման կանխարգելման վերաբերյալ սոցիալական-տեղեկատվական 2 տեսահոլովակ, որոնցից յուրաքանչյուրը շուրջ 2 ամիս հեռարձակվել է Հանրային հեռուստատեսությամբ, իսկ ՀՀ մարզային հեռուստաալիքներով (բացի՝ Արարատ և Կոտայք TV-ներից) 2-ական շաբաթ ժամկետով:

- https://www.youtube.com/watch?v=rceR30qTkIM
- https://www.youtube.com/watch?v=ILMM0EPnB8I

13. Տեսչական մարմնի սոցիալական հարթակների էջերի, պաշտոնական կայքի և ԶԼՄ-ների միջոցով հրապարակվել է 21 իրազեկող կանխարգելիչ հիշեցումներ՝ «Տերևաթափից առաջացած թափոնների այրման», «Խոզանների այրման բացասական հետևանքների», «Թափոնների, բուսածածկույթի այրման վտանգների ու հետևանքների», «Բուսածածկույթի մնացորդները չայրելու», «ՎԻՎՕ-ով նախատեսված տուգանքների», «Մթնոլորտային օդի պահպանության» օրենքի պահանջների, «Անտառային և բուսածածկ տարածքներում հրդեհներից խուսափելու» վերաբերյալ:

Մթնոլորտային օդի պահպանության ուղղությամբ վերահսկողական միջոցառումների ընթացքում հայտնաբերված դեպքերի, կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ հրապարակումներ:

- https://goo.su/I3QHFDS
- https://shorturl.at/xnnXa
- https://shorturl.at/uzDtB
- https://goo.su/x6qlh
- https://shorturl.at/15fpP
- https://rb.gy/v1wt68
- https://goo.su/ZVaR
- https://www.1lurer.am/hy/2025/08/19/7/1365183
- https://u.to/Geywlg
- https://www.facebook.com/reel/1481702586289683
- https://shorturl.at/p9E4o

- https://shorturl.at/S15on

14. Մթնոլորտային օդի պահպանության, խոզանների, չորացած բուսածածկույթի, արտադրական և կենցաղային թափոնների այրումների կանխարգելման նպատակով Հանրային հեռուստատեսությամբ, տարբեր ԶԼՄ-ներով, Արմենպրես լրատվական գործակալությունում կազմակերպվել է 6 մամուլի ասուլիս և հարցազրույց:

- https://www.youtube.com/watch?v=4P_drlE__Os&t=7s
- https://www.youtube.com/watch?v=CudQvxw4FNo&t=6s
- https://short.do/lk_33i
- https://www.facebook.com/reel/833077619234734
- https://www.youtube.com/watch?v=GsT7Cs9JLeg&t=83s
- https://short.do/nm4xb4

Մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված վերահսկողական միջոցառումների արդյունքում 2025 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից արձանագրվել է թափոնների, տերևների, խոզանների, բուսածածկի մնացորդների, աղբավայրերի այրումների վերաբերյալ 1156 դեպք: Հարուցված վարչական վարույթների արդյունքում 111 ֆիզիկական և իրավաբանական անձ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 2,700,000 ՀՀ դրամի չափով:

- ***<u>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը</u>***

Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Վայոց Ձորի, Տավուշի, Կոտայքի և Սյունիքի մարզերի համայնքների ղեկավարների հետ համագործակցելով, բնակչության շրջանում իրականացրել է աշխատանքներ մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված օրենսդրությամբ սահմանված դրույթների՝ մթնոլորտային օդն աղտոտող վնասակար մարդածին երևույթների և դրանց հետևանքների վերաբերյալ, մասնավորապես՝ խոզանների, չորացած բուսածածկույթի արտադրական թափոնների, վտանգավոր թափոնների այրման հետևանքների մասին: Իրազեկման նյութերը և իրականացված միջոցառումների նկարները տեղադրվել են նաև համայնքապետարանների կայք էջերում և ֆեյսբուքյան էջերում:

Նախարարության կողմից, մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի համակարգի արդիականացմանը զուգընթաց, նախատեսվել է նաև ՀՀ օրենսդրության մոտարկումը ԵՄ օրենսդրությանը, մասնավորապես.

- Կառավարության 2025 թվականի օգոստոսի 14-ի N1142-Ն որոշմամբ հաստատվել և ամբողջովին վերանայվել են մթնոլորտային օդի որակի գնահատման չափանիշները, աղտոտվածության չափման մեթոդների, ինչպես նաև աղտոտվածության չափման կայանների տեղադիրքերի և քանակների միասնական չափանիշները՝ համապատասխանեցնելով առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առաջարկվող ցուցանիշներին և ԵՄ համապատասխան հրահանգներին,
- Կառավարության 2025 թվականի օգոստոսի 14-ի N1145-Ն որոշմամբ հաստատվել է գոտիների և ագլոմերացիաների դասակարգման վերաբերյալ կարգը, համաձայն որի՝ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի իրականացման, արտանետումների վերահսկման կառավարման նպատակով հանրապետության տարածքը բաժանվել է ագլոմերացիայի (Երևան քաղաք) և գոտիների, որը ստեղծում է նախադրյալներ յուրաքանչյուր գոտում կամ ագլոմերացիայում օդի որակի պահպանության պլաններ մշակելու համար՝ համաձայն ԵՄ չափանիշների,
- Կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N1958-Ն որոշմամբ հաստատվել է մթնոլորտային օդի պետական մոնիթորինգի իրականացման, ստացված տվյալների հավաքման, վերլուծության, գնահատման և տեղեկատվության տրամադրման կարգը, համաձայն որի ապահովվել է իրավական հիմք մթնոլորտային օդի որակի գնահատման և

հանրայնացման բնագավառում, հստակ տարանջատվել են պետական գերատեսչությունների պարտավորությունները մթնոլորտային օդի որակի վերաբերյալ հանրության իրազեկման բնագավառում, սահմանվել է օդի որակի ինդեքս, որի արդյունքում հասանելի և տեսանելի կդառնա հանրությանը, զգայուն բնակչությանը և խոցելի խմբերի համար մթնոլորտային օդի որակի վերաբերյալ տեղեկատվությունը, մարդու առողջության վրա հնարավոր ազդեցության գնահատումը, սահմանվել է դրույթ մարդու առողջության վրա աղտոտվածության ազդեցության, հնարավոր նախանշանների և առաջարկվող կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ,

- Կառավարության 2026 թվականի փետրվարի 12-ի N143-Ն որոշմամբ հաստատվել է մթնոլորտային օդի աղտոտվածության կրիտիկական մակարդակի և կրիտիկական բեռնվածության շեմի վերաբերյալ կարգը, համաձայն որի կիրականացվի բնական էկոհամակարգերի գիտականորեն հիմնավորված գնահատում, կհայտնաբերվեն ռիսկային և առավել զգայուն տարածքները, ինչը հիմք կստեղծի աղտոտիչների արտանետումների կառավարելի քաղաքականության մշակման համար, ինչպես նաև վերահսկելի և կառավարելի կդառնա մթնոլորտային օդի աղտոտվածության ազդեցությունը բնական էկոհամակարգի վրա: